*Հաստատված է*
ԵՊՀ տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի գիտական խորհրդի
2016 թ. մարտի 23-ի նիստում ընդունված N 2 որոշմամբ
Տնտեսագիտության և կառավարման ֆակուլտետի ԳԽ նախագահ՝

___________ Հ. Լ. Սարգսյան

# ԵՊՀ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ 2016-2020 ԹԹ. ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԾՐԱԳԻՐ (ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ-ՊԼԱՆ)

**Երևան-2016**

# ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ

## I. ՈՐԱԿՅԱԼ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

| Գործողություն/ միջոցառում/ ծրագիր | 2016 | | 2017 | | 2018 | | 2019 | | 2020 | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | I Կիս. (01-06) | II Կիս. (07-12) | I Կիս. (01-06) | II կիս. (07-12) | I Կիս. (01-06) | II Կիս. (07-12) | I Կիս. (01-06) | II Կիս. (07-12) | I Կիս. (01-06) | II Կիս. (07-12) |
| *Խնդիր 1.1. Իրականացնել կրթական ծրագրերի կառուցվածքային և բովանդակային վերափոխում՝ որակավորումների ազգային շրջանակին և աշխատաշուկայի արդի պահանջներին համահունչ:* | | | | | | | | | | |
| **1.** Վերամշակել մագիստրոսի կրթական ծրագրերը որակավորումների ազգային շրջանակին և միջազգային առարկայական հենանիշերին (բենչմարք) համապատասխան:<br>1.1. Վերանայել «Ֆինանսատնտեսական համակարգերի մոդելավորում» մագիստրոսական ծրագրի ուսումնական պլանը:<br>1.2. «Կառավարման ինֆորմացիոն համակարգեր» մագիստրոսական ծրագրի հիմքի վրա հիմնել «Կառավարչական ֆինանսատնտեսական համակարգեր» մագիստրոսական ծրագիրը:<br>1.3. Մշակել և հաստատման ներկայացնել «Կառավարչական ֆինանսատնտեսական համակարգեր» մագիստրոսական ծրագրի ուսումնական պլանը:<br>1.4. Վերանայել ֆակուլտետի մագիստրոսական ծրագրերի ցանկը: | | X | X | | | | | | | |
| **2.** Ստեղծել բակալավրի կրթական ծրագրի ղեկավարի «ինստիտուտ»՝ ծրագրի պատշաճ մշակման և իրականացման նպատակով: | | X | | | | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| 2.1. Ֆակուլտետի գիտխորհրդի հաստատմանը ներկայացնել բակալավրի կրթական ծրագրերի ղեկավարների թեկնածությունները: | | | | | | | | | | |
| **3.** Վերամշակել բակալավրի կրթական ծրագրերը որակավորումների ազգային շրջանակին և միջազգային առարկայական հենանիշերին (բենչմարք) համապատասխան:<br>3.1. Վերանայել ֆակուլտետի բակալավրի կրթական ծրագրերի ուսումնական պլանները:<br>3.2. Ֆակուլտետի բակալավրի կրթական ծրագրերի ուսումնական պլանների վերանայումից հետո վերանայել այդ ծրագրերում ընդգրկված դասընթացների առարկայական ծրագրերը: | | X | X | X | | | | | | |
| **4.** Մշակել և իրականացնել միջմասնագիտական մագիստրոսական նոր ծրագրեր:<br>4.1. Վերանայել «Տնտեսագիտություն և գործարարություն» մագիստրոսական ծրագիրը՝ այն միջմասնագիտական («Տնտեսագիտություն» «Ֆինանսներ» և «Կառավարում» մասնագիտություններ) դարձնելու նպատակով:<br>4.2. ԵՊՀ իրավագիտության և սոցիոլոգիայի ֆակուլտետների հետ համատեղ մշակել և իրականացնել միջմասնագիտական մագիստրոսական նոր ծրագրեր: | | X | X | X | X | X | X | X | X | X |
| **5.** Մշակել և իրականացնել պրակտիկաների բարելավմանն ուղղված համալիր միջոցառումների ծրագիր:<br>5.1. Պայմանավորվածություններ ձեռք բերել և նախնական աշխատանքներ կատարել ԵՊՀ-ի և հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների և խոշոր ձեռնարկությունների ու կազմակերպությունների միջև ֆակուլտետի ուսանողների պրակտիկաների անցկացման նոր պայմանագրերի կնքման ուղղությամբ: | | X | X | X | X | X | X | X | X | X |
| **6.** Հիմնել անգլերեն լեզվով դասավանդվող մագիստրոսական ծրագրեր՝ «Ֆինանսներ», «Միջազգային տնտեսական հարաբերություններ», «Ֆինանսատնտեսական | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| կառավարման ինֆորմացիոն համակարգեր»: | | | | | | | | | | |
| *Խնդիր 1.2. Բարելավել դասավանդման, ուսումնառության և գնահատման գործընթացները:* | | | | | | | | | | |
| **1.** Զարգացնել մանկավարժական առաջավոր փորձի խրախուսման և տարածման մեխանիզմները, նպաստել ուսուցման ժամանակակից մեթոդների և տեխնոլոգիաների ներդրմանը:<br>1.1. Խրախուսել (հեռակա ուսուցման միջոցներից պարգևատրություններ, դասախոսների տարբերակված համակարգի համար դեկանատի կողմից դասախոսներին տրվող միավորներ, և այլն) ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի անդամների ներգրավումը դասախոսների փոխանակման տարբեր ծրագրերում: | X | X | X | X | X | X | X | X | X | X |
| **2.** Կրթափորձի կարգով ներդնել արդյունահեն և ձևավորող (ֆորմատիվ) գնահատման նոր ձևեր՝ հիմնված ակնկալվող կրթական վերջնարդյունքների գնահատման վրա: Ստեղծել համապատասխան մեթոդական հենք և ձեռնարկներ: | | | | | | | | X | X | X |
| **3.** Ուսումնասիրել դասավանդման, ուսումնառության և հետազոտության ինտեգրման (փոխկապակցման) ժամանակակից փորձը՝ բակալավրի և մագիստրոսի կրթական ծրագրերում կիրառելու նպատակով: | X | X | X | X | X | X | X | X | X | X |
| **4.** Մշակել և ներդնել ակադեմիական ազնվությունն ապահովող մեխանիզմներ, այդ թվում՝ ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի (ատենախոսությունների) գրագողությունը կանխելու նպատակով:<br>4.1. Ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի գրագողության դեպքերը հայտնաբերելու և տեղեկացնելու համար ֆակուլտետի մեթոդխորհրդին կից ձևավորել մշտական հանձնաժողով: | | | | | | | X | X | X | X |
| *Խնդիր 1.3. Բարձրացնել որակի ներքին ապահովման համակարգի կառույցների գործունեության արդյունավետությունը:* | | | | | | | | | | |
| **1.** Փորձնական սկզբունքով ստեղծել մի շարք կրթական ծրագրերի ուսանողական հանձնաժողովներ՝ ուսանողական | X | X | | | | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հարցումների արդյունքներին հետամուտ լինելու և ծրագրերի որակի վերաբերյալ հետադարձ կապն ապահովելու համար: Հաջողված փորձը տարածել բոլոր ծրագրերում: | | | | | | | | | | |
| **2.** Գործադրել կրթական ծրագրերի ընթացիկ մշտադիտարկման (մոնիթորինգի) և պարբերական վերանայման կարգը մագիստրոսի ծրագրերի համար: | | | | | | | | X | X | X |
| **3.** Գործադրել ԵՊՀ դասախոսական կազմի գործունեության բազմագործոն գնահատման կարգը բոլոր ամբիոններում և կենտրոններում:<br>3.1. Ներկայացնել առաջարկություններ ԵՊՀ դասախոսական կազմի գործունեության բազմագործոն գնահատման կարգի վերաբերյալ: | | | X | X | X | X | X | | | |
| *Խնդիր 1.4. Ապահովել տեղեկատվական տեխնոլոգիաների ընդլայնված և արդյունավետ օգտագործումը կրթական գործընթացում:* | | | | | | | | | | |
| **1.** Ներդնել և շահագործել վեբ-ուսուցման ունիվերսալ էլեկտրոնային համակարգ՝ ուսումնառության ռեսուրսների առցանց մատուցման համար:<br>1.1. Հաստատել վեբ-ուսուցմամբ դասընթացների ցանկը, առարկայական ծրագրերը:<br>1.2. Համակարգում տեղադրել նշված առարկաների դասավանդման ուսումնական և օժանդակ նյութերը: | X | X | X | X | X | X | X | X | X | X |
| **2.** Վերապատրաստել ֆակուլտետի դասախոսական կազմը ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսների ստեղծման և մատուցման համար: | | | X | X | X | X | X | X | X | X |
| **3.** Ապահովել կրթական ծրագրերը ուսումնառության էլեկտրոնային ռեսուրսներով:<br>3.1. Հաստատել յուրաքանչյուր դասընթացի էլեկտրոնային ռեսուրսների ցանկը և բովանդակությունը:<br>3.2. Նշանակել պատասխանատու էլեկտրոնային ռեսուրսների սպասարկման և պարբերաբար թարմացման համար: | | | | | | X | X | X | X | X |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **4.** Հեռակա ուսուցման դասընթացներն ապահովել համապատասխան էլեկտրոնային ռեսուրսներով:<br>4.1. Հաստատել յուրաքանչյուր դասընթացի էլեկտրոնային ռեսուրսների ցանկը և բովանդակությունը:<br>4.2. Նշանակել պատասխանատու էլեկտրոնային ռեսուրսների սպասարկման և պարբերաբար թարմացման համար: | X | X | X | X | X | X | X | X | X | X |
| **5.** Կանոնակարգել և ընդլայնել առցանց եղանակով իրականացվող դասընթացները:<br>5.1. Հստակեցնել առցանց եղանակով իրականացվող դասընթացների ցանկը, գրականությունը, ծրագիրը և դասավանդման մեթոդիկան: | X | X | X | X | X | X | X | X | X | X |

## II. ԱՐԴԻԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

| Գործողություն/<br>միջոցառում/<br>ծրագիր | 2016 | | 2017 | | 2018 | | 2019 | | 2020 | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | I Կիս. (01-06) | II Կիս. (07-12) | I Կիս. (01-06) | II կիս. (07-12) | I Կիս. (01-06) | II Կիս. (07-12) | I Կիս. (01-06) | II Կիս. (07-12) | I Կիս. (01-06) | II Կիս. (07-12) |
| *Խնդիր 2.1. Նպաստել հետազոտությունների ծավալի մեծացմանը և հետազոտական նախագծերում դասախոսական կազմի և սովորողների ներգրավվածության ընդլայնմանը:* | | | | | | | | | | |
| **1.** Իրականացնել հետազոտական գործունեության գնահատում՝ առաջնորդվելով գիտական հրատարակումներով, դրանց վրա կատարված հղումներով և այլ ընդունված ցուցանիշներով:<br>1.1. Խրախուսել (հեռակա ուսուցման միջոցներից պարգևատրություններ, դասախոսների տարբերակված համակարգի համար ղեկանատի կողմից դասախոսներին տրվող միավորներ և այլն) ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմի անդամների հետազոտական գործունեությունը: | | | X | X | X | X | X | X | X | X |
| **2.** Ընդլայնել գիտահետազոտական ծրագրերում ասպիրանտների և մագիստրանտների մասնակցությունը: | X | X | X | X | X | X | X | X | X | X |
| **3.** Ապահովել ՈւԳԸ շրջանակներում ուսանողների գիտահետազոտական աշխատանքների ղեկավարումը:<br>3.1. Նշանակել պատասխանատու՝ ՈւԳԸ շրջանակներում ուսանողների գիտահետազոտական աշխատանքների ղեկավարման աշխատանքները համակարգելու համար: | X | X | X | X | X | X | X | X | X | X |
| **4.** Բարելավել հետազոտական բաղադրիչի իրականացումը բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերում:<br>4.1. Ամբիոնների վարիչների հետ պարբերաբար կազմակերպել հանդիպում-քննարկումներ՝ ամբիոնի գծով կատարվող բակալավրիատի ավարտական աշխատանքներում հետազոտական բաղադրիչի դերի | X | X | X | X | X | X | X | X | X | X |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| աճի նպատակով:<br>4.2. Մագիստրոսական ծրագրերի ղեկավարների հետ պարբերաբար կազմակերպել հանդիպում-քննարկում-ներ՝ մագիստրոսական ատենախոսություններում հետազոտական բաղադրիչի դերի աճի նպատակով:<br>4.3. Արգելել հետազոտական բաղադրիչի նվազագույն ընդունելի մակարդակը չապահոված աշխատանքների թույլատրումը հրապարակային պաշտպանության:<br>4.4. Պարբերաբար վերանայել մագիստրոսական ծրագրերում «Գիտական սեմինարի» ծրագիրն ու օրացուցային պլանը: | | | | | | | | | | |
| *Խնդիր 2.2. Զարգացնել հետազոտական համագործակցությունը հանրապետության գիտահետազոտական ինստիտուտների, բուհերի և ձեռնարկությունների հետ:* | | | | | | | | | | |
| **1.** Ներգրավել հանրապետության առաջատար գիտաշխատողներին մագիստրանտների և ասպիրանտների հետազոտական աշխատանքների ղեկավարման և գրախոսման գործում:<br>1.1. Ըստ մանագիտությունների կազմել այլ հաստատությունների աշխատակիցների ցանկ, որոնք կարող են ղեկավարել, գրախոսել տվյալ մասնագիտության մագիստրոսական, թեկնածուական և դոկտորական ատենախոսությունները: | | X | X | X | X | X | X | X | X | X |
| **2.** Աջակցել գիտահետազոտական կենտրոնների հետ համատեղ ծրագրերի իրականացմանը:<br>2.1. ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունների, կենտրոնական բանկի, Ազգային Ժողովի, Սահմանադրական դատարանի, տարբեր գիտահետազոտական կենտրոնների, ձեռնարկությունների, հասարակական կազմակերպությունների հետ առկա համագործակցության հիման վրա ձևավորել նշված կազմակերպությունների ու գերատեսչությունների հետ ֆորմալ, իրավական համագործակցություն: | X | X | X | X | X | X | X | X | X | X |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **3.** Նպաստել ձեռնարկությունների մասնակցությամբ հետազոտական և կրթական ծրագրերի իրականացմանը:<br>3.1. Քննարկել ՀՀ նախարարությունների, պետական գերատեսչությունների և ձեռնարկությունների մասնակցությամբ հետազոտական և կրթական ծրագրերի իրականացման հնարավորությունները: | X | X | X | X | X | X | X | X | X | X |
| *Խնդիր 2.4. Համալսարանում բարձրագույն կրթության 3-րդ աստիճանի չափանիշները համապատասխանեցնել Զալցբուրգյան սկզբունքներին:* | | | | | | | | | | |
| **1.** Նպաստել ասպիրանտների միջմասնագիտական, ներհանրապետական և միջազգային համագործակցությանը: | X | X | X | X | X | X | X | X | X | X |

## III. ՀԱՆՐԱՅԻՆ ՆԵՐԳՐԱՎՈՒՄ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| Գործողություն/ միջոցառում/ ծրագիր | 2016 | | 2017 | | 2018 | | 2019 | | 2020 | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | I Կիս. (01-06) | II Կիս. (07-12) | I Կիս. (01-06) | II կիս. (07-12) | I Կիս. (01-06) | II Կիս. (07-12) | I Կիս. (01-06) | II Կիս. (07-12) | I Կիս. (01-06) | II Կիս. (07-12) |
| *Խնդիր 3.1. Ապահովել հասարակայնության հետ կապերի հետագա զարգացումը և հանրային պատասխանատվության բարձրացումը:* | | | | | | | | | | |
| **1.** Զարգացնել հանրային կապերի միասնական համակարգը, բարձրացնել հանրային կապերի ներբուհական ցանցի արդյունավետությունը: | X | X | X | X | X | X | X | X | X | X |
| **2.** Ընդլայնել հասարակության տարբեր խմբերի հետ հետադարձ կապը և զարգացնել մշտադիտարկման համակարգը: | X | X | X | X | X | X | X | X | X | X |
| *Խնդիր 3.2. Զարգացնել լրացուցիչ կրթության միասնական համակարգը՝ ապահովելով հանրային պահանջարկի և համալսարանական առաջարկի միջև փոխկապակցությունը:* | | | | | | | | | | |
| **1.** Մշակել հանրային պահանջարկին համապատասխան լրացուցիչ կրթության նոր ծրագրեր՝ ընդլայնելով պետական ու մասնավոր կազմակերպությունների հետ գործընկերային կապերը: | | | | X | X | X | X | X | X | X |

## IV. ՈՐԱԿՅԱԼ ՄԱՐԴԿԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐ

| Գործողություն/ միջոցառում/ ծրագիր | 2016 | | 2017 | | 2018 | | 2019 | | 2020 | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | I Կիս. (01-06) | II Կիս. (07-12) | I Կիս. (01-06) | II կիս. (07-12) | I Կիս. (01-06) | II Կիս. (07-12) | I Կիս. (01-06) | II Կիս. (07-12) | I Կիս. (01-06) | II Կիս. (07-12) |
| *Խնդիր 4.1. Զարգացնել դասախոսական կազմի ներուժը:* | | | | | | | | | | |
| **1.**Կատարելագործել դասախոսական կազմի որակավորման բարձրացման ծրագիրը:<br>1.1. Պարբերաբար վերանայել դասախոսների որակավոր-ման բարձրացման ծրագրում ֆակուլտետի կողմից առաջարկված դասընթացների ցանկն ու բովանդակու-թյունը: | X | | | | | | | | | |
| **2.** Մշակել և իրականացնել երիտասարդ դասախոսների ման-կավարժական և հոգեբանական հմտությունները զարգացնող վերապատրաստման դասընթացներ: | | X | | | | | | | | |
| **3.** Սահմանել կրթական ծրագրերին համապատասխան դասա-խոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող պահանջներ՝ ըստ ծրագրի կրթական վերջնարդյունքների: | | X | X | X | | | | | | |

## VI. ՈՐԱԿՅԱԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

| Գործողություն/ միջոցառում/ ծրագիր | 2016 | | 2017 | | 2018 | | 2019 | | 2020 | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | I Կիս. (01-06) | II Կիս. (07-12) | I Կիս. (01-06) | II կիս. (07-12) | I Կիս. (01-06) | II Կիս. (07-12) | I Կիս. (01-06) | II Կիս. (07-12) | I Կիս. (01-06) | II Կիս. (07-12) |
| *Խնդիր 6.1. Զարգացնել ուսանողական օժանդակ ծառայությունները՝ խթանող կրթական միջավայր ապահովելու նպատակով:* | | | | | | | | | | |
| **1.** Խթանել ուսանողների կարիերայի ծառայությունները՝ զարգացնելով լրացուցիչ պրակտիկայի (ինտերնշիփ), խորհրդատվության և ուսուցողական դասընթացների համակարգը: | X | X | X | X | X | X | X | X | X | X |
| **2.** Ներդնել հեռավար եղանակով իրականացվող խորհրդատվությունների համակարգ առանձնահատուկ կարիքներ ունեցող ուսանողների համար: | | | X | X | X | X | | | | |
| 3. Ապահովել շրջանավարտների հետ Համալսարանի և ֆակուլտետի շարունակական կապը և խթանել շրջանավարտների կողմից Համալսարանին տարաբնույթ աջակցության նախաձեռնությունները:<br>3.1. Ստեղծել ֆակուլտետի շրջանավարտների բազա:<br>3.2. Հստակեցնել շրջանավարտների կողմից ֆակուլտետին աջակցության հիմնական ձևերը | | | X | X | X | X | X | X | X | X |

## VII. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԲԱԶՄԱԶԱՆԵՑՈՒՄ ԵՎ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅՈՒՆ

| Գործողություն/<br>միջոցառում/<br>ծրագիր | 2016 | | 2017 | | 2018 | | 2019 | | 2020 | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | I Կիս. (01-06) | II Կիս. (07-12) | I Կիս. (01-06) | II կիս. (07-12) | I Կիս. (01-06) | II Կիս. (07-12) | I Կիս. (01-06) | II Կիս. (07-12) | I Կիս. (01-06) | II Կիս. (07-12) |
| *Խնդիր 7.1. Զարգացնել ընդունելության մարքեթինգային գործընթացները՝ դիմորդների հոսքի պահպանման և մեծացման նպատակով:* | | | | | | | | | | |
| **1.** Զարգացնել դիմորդների մասնագիտական կողմնորոշման համար միասնական տեղեկատվական համակարգը: | X | X | X | X | X | X | X | X | X | X |
| **2.** Դպրոցների ավարտական դասարանների աշակերտների համար անցկացնել «Կիրառական տնտեսագիտություն» առարկայի ամենամյա օլիմպիադաներ: | X | X | X | X | X | X | X | X | X | X |
| **3**. ԵՊՀ-ում պարբերաբար կազմակերպել տարբեր մասնագիտությունների գծով «Ամառային դպրոցներ» հանրապետության ավագ դպրոցների աշակերտների համար:<br>3.1. Կազմել «Տնտեսագիտություն», «Կառավարում» և «Ֆինանսներ» մասնագիտությունների գծով «Ամառային դպրոցների» ծրագրերը:<br>3.2. Հաստատել «Տնտեսագիտություն», «Կառավարում» և «Ֆինանսներ» մասնագիտությունների գծով «Ամառային դպրոցներում» դասավանդող դասախոսներին | X | X | X | X | X | X | X | X | X | X |
| **4**. Ավագ դպրոցների և քոլեջների սովորողների համար կազմակերպել ամենամյա «Բաց դռների օրեր» և ճանաչողական այցեր Համալսարան:<br>4.1. Յուրաքանչյուր ուսումնական տարվա համար կազմել ավագ դպրոցների և քոլեջների սովորողների համար ֆակուլտետում ամենամյա «Բաց դռների օրերի» և ճանաչողական այցերի ժամանակացույց:<br>4.2. Նշանակել այդ միջոցառումների պատշաճ կազմակերպման և անցկացման համար պատասխանատու | X | X | X | X | X | X | X | X | X | X |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| անձանց: | | | | | | | | | | |
| **5.** Ակտիվացնել դիմորդների հավաքագրման աշխատանքները ՀՀ բոլոր մարզերում և այնտեղ գործող՝ դիմորդների հետ տարվող աշխատանքների գծով ԵՊՀ ներկայացուցչություններն ապահովել ֆակուլտետի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվական նյութերով: | X | X | X | X | X | X | X | X | X | X |
| **6.** Ընդլայնել ԵՊՀ-ի հետ պայմանագրային հիմունքներով համագործակցող ավագ դպրոցների շրջանակը: Շարունակել ֆակուլտետի դասախոսական կազմի կողմից մայրաքաղաքի ավագ դպրոցներում դասընթացների, իսկ մարզային դպրոցներում՝ առանձին դասախոսությունների իրականացումը: | X | X | X | X | X | X | X | X | X | X |
| **7.** Ֆակուլտետի դասախոսներին առավելագույնս ներգրավել հանրակրթական ուսումնական հաստատություններում ակնարկային և բովանդակային դասախոսությունների, թեմատիկ քննարկումների կազմակերպման գործում: | X | X | X | X | X | X | X | X | X | X |

## VIII. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՅՈՒՆՈՒԹՅՈՒՆ, ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

| Գործողություն/ միջոցառում/ ծրագիր | 2016 | | 2017 | | 2018 | | 2019 | | 2020 | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | I Կիս. (01-06) | II Կիս. (07-12) | I Կիս. (01-06) | II կիս. (07-12) | I Կիս. (01-06) | II Կիս. (07-12) | I Կիս. (01-06) | II Կիս. (07-12) | I Կիս. (01-06) | II Կիս. (07-12) |
| ***Խնդիր 8.1. Ապահովել Համալսարանի ֆինանսական միջոցների անհրաժեշտ ներհոսքը՝ բազմազանեցնելով դրանց աղբյուրները և մեծացնելով ծավալները:*** | | | | | | | | | | |
| **1.** Ընդլայնել և կանոնակարգել ԵՊՀ վճարովի ծառայությունները: | X | X | X | X | X | X | X | X | X | X |
| **2.** Ապահովել շրջանավարտների և այլ շահառուների հետ Համալսարանի և ֆակուլտետի շարունակական կապը՝ խրախուսելով նրանց կողմից Համալսարանին և ֆակուլտետին ֆինանսական, նյութական և այլ բնույթի աջակցության նախաձեռնությունները:<br>2.1. Նպաստել ԵՊՀ պաշտոնական կայքում և տարբեր սոցիալական ցանցերում ֆակուլտետի խմբերի ստեղծմանը և դրանցում ֆակուլտետի շրջանավարտների ներգրավմանը:<br>2.2. Կազմակերպել ֆակուլտետի շրջանավարտների ամենամյա հանդիպումներ: | X | X | X | X | X | X | X | X | X | X |
| **3.** Ուսումնասիրել Համալսարանի բիզնես հնարավորությունները, մշակել ու կենսագործել տարաբնույթ բիզնես ծրագրեր: | X | X | X | X | X | X | X | X | X | X |
| ***Խնդիր 8.3. Կատարելագործել Համալսարանի իրավական դաշտը և կառավարման համակարգը:*** | | | | | | | | | | |
| **1.** Ներքին իրավական ակտերը համապատասխանեցնել Համալսարանի նոր կանոնադրությանը: | X | X | X | X | | | | | | |
| **2.** Ներդնել կառուցվածքային ստորաբաժանումների ներքին աուդիտի համակարգ: | X | X | X | X | X | X | X | X | X | X |
| ***Խնդիր 8.4. Ապահովել համալսարանական գործընթացների թափանցիկությունը՝ նվազեցնելով կոռուպցիոն ռիսկերը:*** | | | | | | | | | | |

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| **1.** Մեծացնել ուսանողների գիտելիքների գնահատման գործընթացի թափանցիկությունը, բարձրացնել կիրառվող գնահատման համակարգի, չափանիշների և ընթացակարգերի վերաբերյալ ուսանողների իրազեկվածության մակարդակը: | X | X | X | X | X | X | X | X | X | X |
| **2.** Կազմակերպել հակակոռուպցիոն տեխնոլոգիաների և դրանց կիրառման հմտությունների վերաբերյալ ուսումնական մոդուլներ: | X | X | X | X | X | X | | | | |

## IX. ՄԻՋԱԶԳԱՅՆԱՑՈՒՄ ԵՎ ԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

| Գործողություն/ միջոցառում/ ծրագիր | 2016 | | 2017 | | 2018 | | 2019 | | 2020 | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | I Կիս. (01-06) | II Կիս. (07-12) | I Կիս. (01-06) | II կիս. (07-12) | I Կիս. (01-06) | II Կիս. (07-12) | I Կիս. (01-06) | II Կիս. (07-12) | I Կիս. (01-06) | II Կիս. (07-12) |
| *Խնդիր 9.1. Զարգացնել Համալսարանի միջազգայնացմանը նպաստող քաղաքականությունը:* | | | | | | | | | | |
| **1.** Հստակեցնել միջազգայնացման դերակատարների գործառույթները կառուցվածքային տարբեր մակարդակներում, սահմանել և կիրարկել նրանց խրախուսման մեխանիզմները: | X | X | X | X | X | X | X | X | X | X |
| **2.** Ստեղծել հրավիրյալ պրոֆեսորի ինստիտուտ: | X | X | X | X | X | X | X | X | X | X |
| *Խնդիր 9.2. Զարգացնել միջազգայնացման գործընթացները կրթական ոլորտում:* | | | | | | | | | | |
| **1.** Զարգացնել օտարերկրյա բուհերի հետ համագործակցությունը՝ կրկնակի դիպլոմով համատեղ մագիստրոսական ծրագրերի իրականացման ուղղությամբ:<br>1.1. Օտարերկրյա բուհերի հետ ԵՊՀ համագործակցության շրջանակներում զարգացնել այդ բուհերի համապատասխան ստորաբաժանումների հետ ֆակուլտետի համագործակցությունը՝ կրկնակի դիպլոմով համատեղ մագիստրոսական ծրագրերի իրականացման ուղղությամբ: | | X | X | X | X | X | X | X | X | |